



Հետազոտական աշխատանք

<p>Կազմակերպության տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ. հասցե • Հեռախոս 	<p>«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakayindproc@gmail.com +37493581908</p>
<p>Հետազոտության թեմա/վերնագիր</p> <ul style="list-style-type: none"> • Հետազոտության թեմա 	<p>Անգլերեն լեզվի ֆերականության ուսուցում</p>
<p>Ուսուցչի տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ 	<p>Լուսինե Աջաբյան Վյաչեսլավի Անգլերեն լեզվի ուսուցչուհի 093 10 72 79 Lusine.ajabyan@mail.ru Անգլերեն 4, 5, 6, 12- ըր դասարաններ</p>
<p>Ուսումնական հաստատության տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե 	<p>Աբովյան կրթահամալիր ՊՈԱԿ 0222 21 467 abovyanedu@mail.ru</p>

Բովանդակություն

Ներածություն

----- 3

3

1. Անգլերեն լեզվի դերը և նշանակությունը	5	
2. Անգլերեն լեզվի ֆերականության ուսուցում	9	4
Եզրակացություններ, առաջարկություններ		175
Օգտագործված ցանկ		ֆերականության 18 6
		7

Ներածություն

Անգլերենի ուսուցման հանրակրթական դասընթացում ներկայումս տեղի են ունենում նպատակների հիմնային փոփոխություններ: Դա բացատրվում է ոչ միայն մասնագիտական ուսուցման, այլև Ծագային մակարդակում անգլերենի ուսուցման ծրագրերի արմատական փոփոխությամբ: Ինչպես հայտնի է, օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի խորհրդային ավանդույթի շրջանակներում առանձնակի կարևորվում էին հիմնականում գործնական, մեակուրային և կրթական նպատակները:

Սակայն արդեն 1990-ական թվականներին օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի առաջնային նպատակ է սկսում դառնալ հաղորդակցական իրազեկության կամ անձի կարողության ձևավորումը: Արդի փուլում բագային մակարդակում օտար լեզվի դասավանդման նպատակները ներառում են օտարալեզու հաղորդակցական իրազեկության խթանում և աշակերտների զարգացումն ու դաստիարակությունը օտար լեզվի միջոցներով:

Մեթոդաբանները մեծ ուշադրություն են դարձնում հասկապես օտար լեզվի միջոցով աշակերտների բնագրական մտածողության զարգացման, աշխարհայացքի, արժեքային համակարգի ձևավորման, ընդհանուր դաստիարակության և կրթության խնդիրների վրա: Անգլերենի խորացված ուսուցման դասընթացն ավելի մեծ հնարավորություններ է ընձեռում օտար լեզուն սոցիալականացման, դաստիարակության ու կրթության միջոցի, և ոչ թե նպատակի, վերածելու համար: Բագային մակարդակում օտար լեզվի ուսուցումը հետապնդում է ոչ միայն կրթական, ուսումնական, այլև դաստիարակչական նպատակներ: Կարելի է փաստել, որ անգլերեն լեզվի մասնագիտական նպատակներով դասավանդումը վերջին տասնամյակներին լուրջ ուշադրության է արժանանում և ստանում առանձնահատուկ կարևորություն: Եվ դա պատահական չէր կարող լինել գիտության և տեխնիկայի այսպիսի առաջընթացի ժամանակաշրջանում, երբ աշխարհը գտնվում է համակարգչի հզոր ցանցերի տիրապետության տակ:

Առանց անգլերենի, որն աշխարհագրորեն ամենատարածված լեզուն է աշխարհում, հնարավոր չէ պատկերացնել միջազգային հաղորդակցությունը, առևտրական, գործնական, ֆադաֆական ու մեակուրային հարաբերությունները, առաջադիմական գիտությունն ու տեխնոլոգիան: Եվ հասկապես այս բնագավառներում տեղի ունեցող առաջընթացի հետ է կապված անգլերեն լեզվի մասնագիտական նպատակներով դասավանդման դերի աճն ու նշանակությունը: Ինչպես հայտնի է, լեզվի հիմնական դերն այն է, որ այն ստեղծված է և զարգանում է ելնելով մարդկանց հաղորդակցվելու պահանջներից և այն հարկավոր է կյանքի բոլոր բնագավառներում: Այստեղից էլ բխում է օտար լեզվի իմացության անհրաժեշտությունը, առավել ևս այնպիսի մի լեզվի, որն երկրագնդի վրա մեծ թվով մարդիկ են տիրապետում:

1. Անգլերեն լեզվի դերը և նշանակությունը

Գիտության զարգացումը անհնար է պատկերացնել սվյալ բնագավառում առանց արդեն ձեռք բերածը հետագա ուսումնասիրողներին հաղորդելու: Գիտական ուսումնասիրությունների արդյունքների ոչ ճիշտ շարադրանքը կարող է պատճառ դառնալ հեղինակի և ընթերցողի միջև «չինական պարսպի» առաջացմանը: Ուստի բնական է, որ անգլերենի՝ որպես օտար լեզվի ուսուցումը սկսվում է դպրոցական (այժմ՝ հաճախ նաև նախադպրոցական) տարիքում, այս շարունակվում է չափահաս դառնալուց հետո նույնպես:

Ի տարբերություն ընդհանուր անգլերենի, որն ուսուցանվում է դպրոցական տարիքում, անգլերենը մասնագիտական նպատակներով ունի մասնագիտական ուղղվածություն և հիմնականում նպատակաուղղված է չափահաս սովորողին: Արդեն չափահաս դարձած սովորողին, ուսանողին կամ գիտաբանին է հարկավոր անգլերենը մասնագիտական նպատակների համար, որպեսզի նա կարողանա բարձրացնել իր կրթական մակարդակը կամ խորացնի իր մասնագիտական գիտելիքները՝ զերծ մնալով սահմանափակությունից, և բարձրացնի հասարակության մեջ կամ աշխատանքում իր ունեցած դերը:

Միայն անգլերենի լավ իմացությամբ է պայմանավորված նրա անմիջական շփումն առաջատար գիտնականների ու գիտահետազոտական ինստիտուտների հետ, ինչպես նաև գիտական կոնֆերանսներին մասնակցություն ցուցաբերելը, տարբեր գիտական հոդվածների ու առանձին բնագավառների վերջին նվաճումներին իրագել դառնալն առանց միջնորդ լեզվի: Վերոհիշյալից ակնհայտ է, որ անգլերեն լեզվի մասնագիտական նպատակներով դասավանդումը, ի տարբերություն ընդհանուր անգլերենի, հիմնականում նպատակաուղղված է բուհական ուսանողներին և երիտասարդ գիտնականներին: Ըստ ուսուցման մակարդակների այն կարելի է բաժանել երեք էտապների՝ սկզբնական, միջին, խորացված: Սկզբնական էտապը վերաբերում է սկսնակներին՝ այն ուսանողներին կամ երիտասարդ գիտնականներին, որոնք միջնակարգ կրթություն ստանալիս բավարար չավելի չեն յուրացրել անգլերեն լեզվի դասընթացը կամ տիրապետում են որևէ այլ օտար լեզվի և այժմ ցանկանում են ուսումնասիրել անգլերեն՝ մասնագիտական նպատակներով: Առաջին՝ սկզբնական մակարդակում լեզվի ուսուցումն անհրաժեշտ է սկսել լեզվական տարրական գիտելիքներ հաղորդելուց: Օրինակ տառերի, տառակապակցությունների, հնչյունաբանական որոշ կանոնների, ընդհանուր բառապաշարի, ընթերցելու, հարցեր կազմելու ունակությունների ուսուցանում: Այս էտապում սկսնակների համար դեռևս դժվար է տեքստերի վրա ինֆորմացիոն աշխատելը: Այս առումով անհրաժեշտ է առավել ուշադրություն դարձնել ֆերականության արմատավորմանը, որը հետագայում հզոր հիմք է հանդիսանալու լեզվական գիտելիքների զարգացման համար:[1, 50-56]

Միջին էտապում ուսանողը նոր ուսուցանվող լեզվից արդեն ունենալով նախնական գիտելիքներ, ընդհանուր պատկերացում է կազմում այդ լեզվի մասին, կարողանում է միջին բարդության որևէ տեքստ կարդալ ու հասկանալ և ի վիճակի է բանավոր զրույց վարել առօրյա թեմաների շուրջ: Ինչ վերաբերում է անգլերեն լեզվի մասնագիտական նպատակներով դասավանդմանը, ապա առավել նպատակահարմար է այն սկսել միջին էտապում, սովորողի ուշադրությունը բևեռելով այնպիսի ֆերականական և լեզվական կառուցվածքների վրա, որոնց գործածությունը գիտական տեքստերում նկատվում է առավել հաճախ, և առանց որոնց իմացության մասնագիտական տեքստերի ըմբռնումը բավական դժվարանում է:

Այսպես, օրինակ, ֆերականությունից պետք է առանձնապես ուշադրություն դարձնել ժամանակաձևերի, կրավորական սեռի, հոդի, դերբայական դարձվածների ուսուցմանը: Եվ, քանի որ անգլերենում ժամանակաձևերը որոշակի բարդություն են իրենցից ներկայացնում, ապա դրանց ուսուցումը պետք է տարվի շարունակաբար և խիստ հետևողականորեն: Տեխնիկական տեքստերում **Passive Voice**-ի հաճախակի գործածությունը պահանջում է այդ կառուցվածքի ճիշտ և պարզորոշ ըմբռնում, քանի որ դրա

մոտավոր, ոչ կոնկրետ ընկալումը կարող է տվյալ բնագավառում մասնագիտական հասկացությունների սխալ ընկալման պատճառ դառնալ: Ինչպես արդեն վերը նշվեց, հոդերի, որոշ դերբայական դարձվածների, ինչպես նաև ֆերականական այլ կարգերի ուսուցումը նույնպես կարևոր է անգլերենը մասնագիտական

նպատակներով դասավանդելիս: Եվ նկատի ունենալով տեխնիկական գիտություններին հետևող լսարանի լեզվամտածողության առանձնահատկությունները, առավել նպատակահարմար է ֆերականական նյութը ներկայացնել աղյուսակների կամ լեզվական կառույցների տեսքով, որոնք կարելի է գետեղել գրքի յուրաքանչյուր դասաբաժնի սկզբում կամ դասագրքի վերջին մասում՝ հավելվածի տեսքով: Նշված ֆերականական գիտելիքներից և ընդհանուր բառապաշարից բացի, որոնց իմացությունը հնարավոր է դարձնում միջին դժվարության տեքստերի ընկալումը և տվյալ թեմայի շուրջ առաջադրված հարցերին պատասխանելը, խիստ անհրաժեշտ է դառնում այնպիսի բառերի և դարձվածների ուսուցումը, որոնց միջոցով հնարավոր կլինի ճիշտ արտահայտել տարբեր բնագավառների բնորոշ հասկացություններ և եզրահանգումներ: Այս առումով խիստ կարևոր է գիտական տերմինների դերը: Տերմինների, դարձվածների, գիտական հասկացությունների ուսուցմամբ էլ պայմանավորված է անգլերեն լեզվի մասնագիտական նպատակներով ուսուցման խորացված էտապը: Քանի որ անգլերեն լեզուն հագեցած է այնպիսի բառերով, որոնց բնորոշ է հոմանիշների բազմազանությունը, ինչպես նաև այնպիսի բառերի և արտահայտությունների առատությունը, որոնք հաճախ համարժեք են միմյանց և կարող են օգտագործվել մեկը մյուսի վոխարեն, լեզուն խորապես ուսումնասիրողի կողմից պահանջվում են թե լեզվական, թե մասնագիտական լայն գիտելիքներ, հարուստ բառապաշար, ինչու չէ նաև լեզվական ուրբ հոտառություն տվյալ կոնտեքստում բառի ճիշտ և տեղին ընտրության կատարելու համար: Այսպիսով, ուսուցման խորացված էտապը բնորոշվում է լեզուն ուսումնասիրողի բողի բառապաշարի գիտական տերմիններով և հասկացություններով համալրմամբ, ինչպես նաև նրա բանավոր խոսքի ունակությունների զարգացմամբ, որին կարող է մեծ չափով նպաստել մասնագիտական թեմաներով բանավեճերի կոնֆերանս – ների կազմակերպումը, ինչպես նաև լեզվական միջավայրի ստեղծումը, որը հնարավորություն կտա լեզուն առավել հաճախ և ազատ օգտագործել: Այստեղ հիմնականում նկատի է առնվում սովորողի պատմելու ունակության զարգացումը, ինչպես նաև տվյալ բնագավառին բնորոշ երևույթների մատչելի ներկայացումը: Այս առումով օտար լեզվի դասավանդման պրոցեսում շատ բան է կախված նաև գիտական տեքստերի ընտրությունից² : Անհրաժեշտ է, որ ընտրված գիտական տեքստերը վերաբերեն տվյալ բնագավառին կամ, առնվազն որոշակի առնչություն ունենան նշված բնագավառի հետ: Կարևոր է նաև, որ ընտրված գիտական տեքստերը կազմված լինեն հնարավորին չափ պարզ և մատչելի, գերծ լինեն ավելարդ բառակապակցություններից, դարձվածներից և բարդ ֆերականական կառույցներից, որոնք տվյալ պարագայում կծանրաբեռնեն սովորողին և կեղեն նրա ուշադրությունը հիմնական իմացությունից: Գիտական տեքստերի ճիշտ ընտրությունը մեծապես կնպաստի այն երևույթների և մասնագիտական հասկացությունների ընկալմանը, որոնք շարադրված են ընտրված հատվածում: Ցանկալի է նաև, որ երևույթները կամ հասկացությունները ներկայացված լինեն մատչելի նախադասություններով: Սակայն սա բոլորովին չի նշանակում, որ գիտական տեքստերում տրամաբանորեն և ֆերականորեն կառուցված բարդ նախադասություններ օգտագործելուց պետք է խուսափել: Նման նախադասությունների

անկախությունը գիտական տեխստերում անխուսիելի է և նույնիսկ անհրաժեշտ օտար լեզուն մասնագիտական նպատակներով դասավանդելիս: Հարկ է նշել նաև, որ այս կամ այն երևույթը նկարագրելիս հարկավոր է խիստ ուշադիր լինել բառերի, արտահայտությունների ընտրության հարցում, քանի որ, ինչպես հայտնի է, գիտական խոսքը պետք է լինի դիպուկ և նպատակային:[3, 47-54]

2. Անգլերեն լեզվի ֆերականության ուսուցում

Քերականական-թարգմանական մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս բառապաշարը ուսուցանել ոչ թե մեկ բառ — թարգմանություն սկզբունքով, այլ յուրաքանչյուր բառով կազմված առավել տարածված արտահայտությունների մատուցմամբ: Այսինքն, դասավանդողը ներկայացնում է բառը՝ կազմելով բառակապակցություններ և արտահայտություններ, իսկ սովորողն աշխատում է լեզվական ձևերի հետ, ինչն էլ «թոթափում է սովորողի բեռը» ուսուցման գործընթացում: Քերականական-թարգմանական մեթոդի հիմնական առանձնահատկությունն այն է, որ դասավանդման գործընթացում չեն տարանջատվում բառապաշարն ու ֆերականությունը: Յուրաքանչյուր նոր բառ ներկայացվում է տարբեր համատեքստերում, այսինքն դասավանդողը ներկայացնում է այդ բառի բառարանային բոլոր իմաստները, դրանով կազմվող բացառությունները և այլ նրբություններ ունեցող արտահայտությունները: Նախադասությունների մեջ գործածելիս դասավանդողը խոսքն այնպես է կազմում, որ նոր բառը, որպես խոսքի մաս, հանդես գա նախադասության այն բոլոր հնարավոր անդամների դերերում, որոնք թույլ է տալիս ֆերականությունը և սովորողին ներկայացնում է արտահայտությունների և բառակապակցությունների անդամային դերը

նախադասության մեջ: Իսկ եթե նոր բառը բայ է, դրանով նաև կազմվում են սովորողին ծանոթ բոլոր ժամանակաձևերը:

Օտար լեզվի ուսուցման ընթացքում ֆերականական-թարգմանական մեթոդի կիրառումը սովորողին հնարավորություն է տալիս նախադասություններ կազմելիս իր սովորած «պատրաստի» արտահայտություններն ու բառակապակցությունները «տեղադրել» նախադասության մեջ՝ պարզապես իմանալով սվյալ լեզվի շարադասական առանձնահատկությունները՝ նախադասության անդամների գործածման հերթականությունը խոսքում: Այսինքն, սովորողը յուրացնում և գործածում է «պատրաստի» ֆերականական ձևերը, ոչ թե առանձին բառերը շարահյուսական համատեքստում: Դասընթացի ընթացքում գրառումներ կատարելու պատճառով ժամանակ չկարգեցելու նպատակով՝ դասավանդողները իրենց մշակած բառապաշարն ու դրանց գործածման հնարավոր տարբերակները գրավոր /թղթային/ տարբերակով ներկայացնում են սովորողին /այդ պահին կամ հաճախ նաև նախորդ դասին/: Հարկ է նշել, որ այս մեթոդը հիմնական շեշտը դնում է գրավոր խոսքի զարգացման վրա, քանի որ սովորողը ավելի շատ աշխատում է սեսողական պատկերների, քան լսողական հնչյունների հետ: Գ. Քուբը, ուսուցման երկլեզու մեթոդների մեջ, ֆերականական-թարգմանական մեթոդը համարում է «հեղափոխական մեթոդ», որն իր բացառիկության շնորհիվ սովորողին հնարավորություն է տալիս մշակումներին ժամանակ տրամադրելու փոխարեն պարզապես սերտել նյութը: Այս մեթոդը լայնորեն կիրառվում է արագացված դասընթացների ժամանակ: Կարծում ենք, այն հեղափոխական էր հենց այն դեպքերի համար, երբ սովորողը ստիպված է կարճ ժամանակահատվածում սովորել լեզուն կամ զբաղվածության պատճառով չի կարողանում ժամանակ հատկացնել ինֆորմայն աշխատանք կատարելուն:

Քերականություն: Բանավոր խոսքում հաճախակի են կարճ գրույցները, երկխոսությունները, որոնցում յուրաքանչյուր միտք կարող է արտահայտվել ոչ ավել, քան մեկ բառով կամ կարճ կապակցությամբ, օրինակ,

A. Coffee?

B. Thanks!

A. Milk?

B. With pleasure! [2, 65-69]

Նմանօրինակ գրույցները հնարավոր են, սակայն դրանք կարճ են, տարբեր թեմաների շուրջ երկար շարունակելը փաստացի անհնար է դառնում: Հետևաբար, ավելի իմաստավոր խոսակցություն ծավալելու համար անհրաժեշտ է հաշվի առնել և հավաքագրել լեզվի ֆերականական «ուսուրաները» նույնպես: Հարկ է նշել, որ անգլերենն ունի որոշ առանձնահատկություններ, որոնք սահմանագծվում են գրավոր և բանավոր խոսքում: Այսպես, եթե գրավոր խոսքում գերակայում է ենթակա (subject)+բայ(verb)+խնդիր(object) կառույցը, ապա բանավոր խոսքում առավել գործածական են ձգվող, այլընտրանքային կառույցները: Գրավոր խոսքում նախադասությունը տրվում է անուղղակի խոսքին, մինչդեռ բանավոր խոսքում գերակշռում է

ուղղակի խոսքը: Գրավոր խոսքում նախընտրելի է պարզ խոսքը, իսկ բանավորում հիմնականում անորոշ, ոչ պարզ խոսքն է կիրառական: Գրավոր խոսքում քիչ են դադարները, մինչդեռ բանավորում առկա են բազմաթիվ դադարներ: Եվ վերջապես նշենք, որ գրավոր խոսքում կատարողական էֆեկտներ չկան, սակայն հակառակ դրան, բանավորում դրանք իրենց ուրույն տեղն են գրադեցնում՝ ներառելով.

○ տատանումներ,

○ կրկնություններ,

○ սխալ մեկնարկ,

○ անավարտություն,

○ շարահյուսական խառնումներ (**syntactical blends**):

Վերոնշյալով չեն սահմանափակվում գրավոր և բանավոր խոսքի առանձնահատկությունները: Այլ տարբերակիչ գծեր ևս գոյություն ունեն: Օրինակ՝ բանավոր խոսքում անձնական և որոշյալ դերանունները (**I, you, my, our...**) ավելի հաճախ են գործածվում, քան գրավորում: Բացի այդ, գոյություն ունեն բայի ժամանակաձևերի, սեռերի բաշխման և հանախականության առանձնահատուկ գծեր ևս: Համառոտ ներկայացնենք դրանք: Այսպես՝ բանավոր խոսքում. ներկա ժամանակաձևը կրկնակի գերազանցում է անցյալ ժամանակաձևին,

○ ներկա և անցյալ վաղակատար շարունակական ձևերը հազվադեպ են,

○ կրավորական բայերը կազմում են ընդամենը 2%ը,

○ **will, would** և **can** մոդալ բայերը շատ գործածական են:

Այս տեսանկյունից իրադրական վարժությունները ուսուցման գործընթաց ներմուծելը շատ արդյունավետ է, քանի որ սովորողները դրանք կատարում են՝ հիմնվելով իրենց կենսափորձի, աօրյա կյանքի փաստերի, իրողությունների վրա:

Վերարտադրողական ֆերականական հմտությունները սովորողները պետք է ձեռք բերեն նաև տեխնիկական գործունեությունն ըմբռնելու համար: Հետևաբար, ֆերականական վարժությունները մշակելիս կամ ընտրելիս պետք է հաշվի առնել խոսքային գործունեության առանձին տեսակների յուրահատկությունները, նյութի և վարժությունների բովանդակության բարդացումը, համատեխնիկ մեջ ուսուցանվող կառուցվածքի օգտագործումը: Ամենից առաջ ֆերականության ուսուցումը ուղղված է սովորողների ֆերականական կոմպետենցիայի ձևավորմանը/զարգացմանը, նրանց մտավոր գործունեության ակտիվացմանը: Ինչպես նշվում է ժամանակակից եվրոպական կրթության հիմնարար փաստաթղթում՝ «Լեզուների իմացության իրազեկության համաեվրոպական համակարգում» բառապաշարային, ֆերականական գիտելիքներն ու կարողությունները հնչյունաբանական հմտությունների հետ միասին կազմում են սովորողների լեզվական կոմպետենցիան, որն էլ նրանց ընդհանուր լեզվաօգտագործողական կոմպետենցիայի առանցքն է: [4, 25-28]

Նպատակը եւ հետազոտական հարցը	Ուսումնասիրության նպատակն է անգլերեն լեզվի ֆերականության ուսուցումը: Հարց: Ինչպե՞ս կարելի է դյուրին դարձնել անգլերեն լեզվի ֆերականության ուսուցումը դպրոցում:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակության ն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	լեզվական գրագիտություն
Հետազոտության քիրախային խումբը և շրջանակը /ֆանակ, սեռային բաշխում/	4-րդ դասարան Տղա՝ 13 Աղջիկ՝ 14
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ ֆանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	Սեպտեմբեր 2023 թ.

Հիմնական բովանդակություն

<p>Գրականության ակնարկ</p> <ul style="list-style-type: none"> Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, 	<p>Անգլերեն լեզվի հետազոտողները և լեզվի ուսուցիչները երկուսն էլ ձգտում են սովորողների կողմից լեզվի օգտագործման նմուշներ ստանալ: Հետազոտողների շրջանում այս նմուշներն անհրաժեշտ են ուսումնասիրելու</p>
--	---

<ul style="list-style-type: none"> Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: <p><u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u></p>	<p>համար, թե ինչպես է տեղի ունենում երկրորդ լեզվի ուսուցումը:</p>
<p>Հետազոտության ընթացքը</p>	<p>Հետազոտությունը կատարվել է չորս հաջորդաբար ընթացող դասաժամերի ընթացքում: Հետազոտության ընթացքում փորձեցի կիրառել առաջադրանքի վրա հիմնված ուսուցման մոտեցումը և ցույց տալ, թե ինչպես կարելի է ցանկացած դասի հիման վրա կազմել համապատասխան առաջադրանք, որը հնարավորություն կընձեռի սովորողներին կիրառել լեզուն շեշտադրելով հաղորդակցության բովանդակությունը, ոչ թե ձևը: Քանի որ ուսուցումը փուլային բնույթ է կրում, 5-րդ դասարանում նպատակահարմար գտա քայլ առ քայլ հասնել նրան, որ երեխաները հաղորդակցվեն անկաշիանդ առաջադրվող իրավիճակի շուրջ: Ուստի առաջադրանքի վրա հիմնված մոտեցումը լիովին կիրառեցի 4-րդ դասաժամի ընթացքում, իսկ նախորդ երեք դասաժամերի ընթացքում նախապատրաստում էի տարբեր վարժությունների օգնությամբ անհրաժեշտ բառապաշարի ներդրմամբ: Առաջին 3 դասաժամերի ընթացքում աշակերտները սովորեցին խոսել հեֆիաթների հիմնական հերոսների մասին և նկարագրել նրանց, աշխատել զույգերով և զարգացնել դերերով ընթերցելու կարողությունները, աշխատել բայերի հետ, գտնել անցյալ ձևը և նկարագրել, թե ամեն տեսարանում ինչ եղավ՝ կիրառելով անցյալ ժամանակաձևը: Յուրաքանչյուր դասի ավարտին աշակերտները նույնպես կիրառել են անցյալ ժամանակաձևը՝ խոսելով իրենց սովորածի մասին: 4-րդ դասաժամին խթանման փուլում հարցադրումների միջոցով նպաստեցի աշակերտների ուշադրության կենտրոնացմանը:</p>

Նախնական փուլում իմ հորինած հեփիաթի միջոցով, որը ցուցադրեցի էկրանին, նրանց բացատրեցի, թե ինչ առաջադրանք է դրված իրենց առջև: Որպիսի առավել ուժադիր և մոտիվացված լինեին աշակերտները այդ հեփիաթը լսելիս, իրենց բաժանեցի աշխատանք, որտեղ նախադասություններ էին դուրս գրված այդ հեփիաթից, և իրենք պետք է լրացնեին դրանք: Այնուհետև բաժանեցի խմբերի պատահական սկզբունքով՝ ըստ բաժանված ֆարսերի գույների: Այս սկզբունքը սովոր դասարանում խնդրահարույց չէր, քանի որ չկա դժվար ներգրավվող երեխա: Բոլորին ներկայացրեցի պահանջները, որոնք հետևյալն էին՝ գրի՛ր հեփիաթ, որտե՛ր վերնագիրը և գլխավոր հերոսներին, կիրառի՛ր բայերը և նկարի՛ր համապատասխան նկար, պատրաստվի՛ր ներկայացնել ամբողջ խմբով: Այս աշխատանքի ընթացքում շատ կարևոր է վերահսկել և օգնել աշակերտներին անհասկանալի հարցերի դեպքում: Այս փուլում աշակերտները ներգրավված աշխատում էին իրենց հեփիաթների առավել յուրօրինակ և պատկերազարդ ներկայացնելու համար, նաև ոգևորված կրկնում էին իրենց հատվածը, որ պետք է ներկայացնեին մնացած խմբերին: Համախմբված աշխատանքի արդյունքում աշակերտները ներկայացրեցին հետաքրքրաշարժ պատմություններ, որտեղ առավել շատ լեզվական նմուշներ էին կիրառված: Բոլոր խմբերը հետաքրքրությամբ լսեցին և պատասխանեցին հարցերին՝ կիրառելով նիշտ բայածևը: Հետաքրքրական է նաև այն փաստը, որ վերջին փուլում, երբ գրեցի իրենց խոսքում ի հայտ եկած որոշ սխալներ գրատախտակին, իրենք հետությամբ ուղղեցին: Ընթերցելով ֆարսերի վրա արված նշումները, թե ինչը հավանեցիր մյուս խմբի աշխատանքում, հասկանալի դարձավ, որ երեխաները ըմբռնել էին բոլոր խմբերի հեփիաթների իմաստները և

	<p>կարողանում էին արտահայտել իրենց կարծիքը դրա վերաբերյալ: Այս խոսքային նմուշները ակամայից կապված են առակերտների առօրյա կյանքին, քանի որ նրանք սովորաբար խոսում են այս կամ այն մուլտից, նշում են ինչն ենհավանում և ինչու: Ամփոփելով հետազոտական աշխատանքի արդյունքները՝ կարելի է փաստել, որ առաջադրանքի վրա հիմնված մոտեցումը իսկապես հանգեցնում է իմաստի փոխանակման առանց որի հաղորդակցություն չի կարող տեղի ունենալ:</p> <p>Տեսական և փորձարարական աշխատանքների արդյունքում պարզ դարձավ, որ լեզվի ըմբռնումը մեծապես ընդլայնվում է, քանի որ այն իրատեսական համատեքստը, որում առակերտները սովորում են լեզուն, առնչվում է նրանց անձնական կյանքին, արտացոլում է սեփական գաղափարները և պատկերացումները: Ի վերջո, հատկաճանաչական է փաստել, որ ցանկացած լեզվական նմուշ սովորողը կկարողանա մտապահել, միայն այն դեպքում, երբ մոտիվացված է և տարբեր իրավիճակներում արդեն իսկ կիրառել է:</p>

Եզրակացություններ, առաջարկություններ

Այսպիսով, հաշվի առնելով դասանյութը և լեզվանյութը, ուսուցման մեթոդներ ու սկզբունքներ ընտրելիս սովորողների ցանկությունները՝ ուսուցիչները և դասընթացը նախագծողները ավելի մեծ հնարավորություն են ստանում մոտեցնել ուսումնական իրադրությունները բնականին, ստեղծել ոչ թե արհեստածին, այլ բնական իրադրություն: Լուրջ խնդիր է նաև պահանջմունքների վերլուծության անցկացման կարգի, ժամանակահատվածի և ընթացակարգի ընտրությունը:

Մեթոդաբանները առաջարկում են անցկացնել այն ամբողջ ուսուցման ընթացքում, նրա տարբեր փուլերում: Այդպիսի մոտեցումը հնարավորություն է ընձեռում ճիշտ գնահատել թե՛ դասընթացը նախագծողների, դասագիրք ստեղծողների, թե՛ գործնական աշխատանք իրականացնող ուսուցիչների աշխատանքը: Այստեղ կարևոր է հստակորեն ընդգծել, թե անգլերենի մասնագիտական դասընթացը նախագծելիս որ հայեցակետն է առաջնային դիտվում:

1. կողմնորոշված ենք դեպի մասնագիտական լեզուն,
2. կողմնորոշված ենք դեպի հմտությունները,
3. կողմնորոշված ենք դեպի ուսուցումը:

Կասկած չկա, որ մասնագիտական կողմնորոշման, հմտությունների զարգացման և ընդհանրապես ուսումնառության կադապարները իրար չեն հակասում, այլ լրացնում են մեկը մյուսին: Այսպիսով, անգլերենի ուսուցման դասընթացը կազմակերպելու համար ուսուցման բոլոր փուլերում անհրաժեշտ է իրականացնել սովորողների պահանջումների վերլուծություն: Վերջինս անգլերենի ուսուցման դասընթացը կազմակերպելիս մղվում է առաջին պլան, քանի որ առանց դրա հնարավոր չէ անհատակացնել ոչ մի դասընթաց, դիտարկել այն տարբերակված կամ ամբողջապես: Այն օգնում է ուսումնամեթոդական գրականություն, թեմաներ ու տեքստեր, համապատասխան մեթոդներ և սկզբունքներ ընտրելիս և կիրառելիս:

<p>Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին</p>	<p>Առաջադրանքը լուծելու համար նրանք պետք է օգտագործեն իրենց սովորած լեզվական կառույցները, բայց չսահմանափակվեն դրանով: Նրանք օգտագործում են լեզուն՝ առանց նկատելու, որ սովորում են: Մի կողմից համագործակցելը և խմբում սովորելը լեզվով վստահաբար շփվելը նպաստում է այդ լեզուն ձեռք բերելուն: Մյուս կողմից հասակակիցներից և ուսուցիչներից դրական արձագանք ստանալն է մեծացնում սովորելու և շփվելու վստահությունն ու մոտիվացիան:</p>
<p>Այլ տեղեկատվություն</p>	

Օգտագործված գրականության ցանկ

1. Г. Рогова., Методика обучения английскому языку. Учебное пособие для пед. ин-тов и фак. иностранных языков, Л.: 2005
2. И. Бим., К проблеме планируемого результата обучения иностранным языкам в общеобразовательной средней школе, “Иностранные языки в школе”, № 6, 2004

3. О. Поляков., Автономия учащихся как основа развития современного непрерывного образования личности, “Иностранные языки в школе”, № 3, 2004
4. П. Сысоев., Обучение иностранному языку на старшей ступени общего среднего (полного) образования. Профильный уровень, “Иностранные языки в школе”, № 2, 2006 Cook G., Translation in Language Teaching. Oxford: Oxford University Press 2010

Հաշվետվության կցված նյութեր

- Հետազոտության գործիքներ (ճարտարաբանական կամ այլ)
- Նկարներ
- Արդյունքներ